

**ԶՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻՒԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, տ.գ.թ., դոցենտ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

## **ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻԶԱԿԱԶՄՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Ցանկացած երկրի, այդ թվում նաև ՀՀ-ի հարկային վարչարարության բարելավումը ծառայեցվում է տնտեսության զարգացմանն ու բնակչության բարեկեցության բարձրացմանը: Նույն նպատակին են միտված նաև Հայաստանում վերջին երկու տասնամյակից ավելի ժամանակահատվածում իրականացված տնտեսական բարեփոխումները: Ակնհայտ է, որ շուկայական տնտեսության ձևավորման և դրա հետագա զարգացման համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ<sup>1</sup>: Տնտեսական անցման գործընթացը ենթադրում է երկրի ֆինանսական, դրամավարկային, բանկային, հարկաբյուջետային, սոցիալական և կառուցվածքային համակարգերում արմատական բարեփոխումների իրականացում: Շուկայական հարաբերություններին անցմամբ պայմանավորված հարկային բարեփոխումների իրականացման ընթացքում անհրաժեշտ է իմաստավորել հարկերի դերը ընդլայնված վերարտադրության գործընթացում<sup>2</sup>: Ուստի, հույժ կարևոր է, որ հարկային վարչարարության համակարգում լավագույնս ներդաշնակվեն հարկերի հարկաբյուջետային և կարգավորիչ գործառնությունները, արդյունավետ և համաչափ բաշխվի ընդհանուր հարկային բեռը, ինչպես նաև առանձին արտադրական կազմակերպությունների, տվյալ ճյուղի և ազգային տնտեսության զարգացման շահերը: Համաշխարհային պրակտիկայում քիչ չեն դեպքերը, որ նշված մտահոգությունների անտեսումը պատճառ է դառնում տնտեսության միակողմանի զարգացմանը, իսկ առանձին դեպքերում կրճատում է ազգային մրցակցային առավելությունների հաջող իրացման հնարավորություններն ինչպես երկրի ներքում, այնպես էլ արտաքին շուկաներում:

Հարկային վարչարարության դերն ավելի է կարևորվում 21-րդ դարում համաշխարհային տնտեսությունում գնալով սրվող մրցակցության և տնտեսական բարեփոխումների արդի փուլում: Այն անմիջական ազդեցություն ունի ազգային տնտեսության կայացման, դրանում կառուցվածքային հիմնավորված տեղաշարժերի, տեղական արտադրության խթանման, ներդրումային միջավայրի զրավայության ու ֆինանսական համակարգի մրցունակության և արդյունավետության բարձրացման գործում: Տեղական ներդրումների սահմանափակ ծավալները, ինչպես նաև դրանց օգտագործման անարդյունավետությունը թույլ չեն տալիս ձևավորել գրավիչ ներդրումային միջավայր, որը թույլ կտա առավել նպատակային բնույթ հաղորդել առկա ֆինանսական միջոցներին: Այս ամենին հարկ է ավելացնել նաև հարկային վարչարարությանն առնչվող օրենքների հաճախակի փոփոխությունները և դրանց հետևանքները:


Հարկային վարչարարությունում առկա խնդիրները գործնականում դժվար հաղթահարելի են, որոնց հանգուցալուծումը միտված է տեղական շուկայում գործարարության աշխուժացման ավելացմանը, ինչպես նաև ազգային տնտեսության զարգացման համար անհրաժեշտ հիմքերի ձևավորմանը: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով տրամադրվում են մի շարք արտոնություններ, որոնք կապված են նշված ներդրումների հետ: Մասնավորապես ՀՀ-ում օտարերկ-

<sup>1</sup> Braithwaite, John, Pittelkow, Yvonne and Williams, Robert, 'Tax compliance by the very wealthy: Red flags of risk', in Valerie Braithwaite (ed.), *Taxing Democracy: Understanding Tax Avoidance and Evasion*, 2003, Ashgate, Aldershot, pp. 205-243.

<sup>2</sup> "Recent Experience with the Value-Added Tax – An Overview", Միջազգային արժույթային հիմնադրամի փաստաթուղթը (№ EBS/00/14), 7 փետրվար, 2000թ., pp.67:

ոյա ուղղակի ներդրումները (այսուհետ ՕՌԻՆ) չեն կարող նվազ բարենպաստ լինել, քան ներքին ներդրումները, այսինքն՝ դրանց համար սահմանված են հավասար պայմաններ: Ոչ մի արգելք գոյություն չունի կապված ՕՌԻՆ-ների, կապիտալի ներհոսքի և դրա դիվերսիֆիկացիայի, շահույթի վերաբաշխման հարցերում<sup>1</sup>: Դրա հետևանքով թույլ է պաշտպանված ներքին ներդրումային միջավայրը, ինչն էլ իր հերթին բերում է ներքին ներդրումների նկատմամբ օտարերկրյա կապիտալի նախապատվության բարձրացմանը:

Այսպես, ըստ գծապատկեր 1-ի 2008թ. համաշխարհային ճգնաժամից հետո կտրուկ նվազել է ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը, ինչը բացատրում է ՀՀ-ում ներդրումային քաղաքականության արդյունավետության ցածր մակարդակը, ինչպես նաև ներդրումային հոսքերի նվազումը: Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2015թ.-ին 2014թ.-ի համեմատ նվազել է 0.01 նիշով, իսկ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2015թ.-ին 2006թ.-ի համեմատ նվազել է 15.1 նիշով: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2008թ.-ին՝ կազմելով 40.9% և այն համեմատելով 2015թ.-ի տվյալների հետ ստացվում է, որ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 20.1 նիշով: 2008թ.-ին ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը պայմանավորված է շահութահարկի մասով օտարերկրյա ներդրումներին տրվող արտոնությունների հետ: Եթե օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է 100%-ով<sup>2</sup>:



Գծապատկեր 1. 2006-2015թթ. ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում, %<sup>3</sup>

Բացի վերոնշյալից կարևորվում է նաև ՀՀ-ի և ԵՏՄ-ում ընդգրկված երկրների կողմից ներդրողների պաշտպանվածության վարկանիշը, որոնք ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ-ի և ԵՏՄ տարածաշրջանային երկրների ներդրողների պաշտպանվածության ինդեքսը<sup>4</sup>

Ցուցանիշներ	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Ներդրողների պաշտպանվածությունը	49	94	25	35	100

<sup>1</sup> <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552>.  
<sup>2</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 39 հոդված(ՀՕ-155, ՀՀՊՏ 1997.12.03/27):  
<sup>3</sup> <http://minfin.am/minfin.am/index.php?cat=69&lang=1>.  
<sup>4</sup> <http://www.doingbusiness.org/>.

Աղյուսակ 1-ից երևում է, որ ԵՏՄ տարածաշրջանային երկրների ներդրողների պաշտպանվածության ինդեքսները տարբեր են: Այսպես, Ղազախստանում այն կազմում է 25, Ղրղզստանում՝ 35, ՀՀ-ում՝ 49, Բելառուսում՝ 94, իսկ Ռուսաստանում՝ 100:

Միաժամանակ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության վերլուծության և համեմատության համար կատարվել են միջազգային համեմատություններ, մասնավորապես ըստ աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 2

Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրների ցանկը, 2015թ.<sup>1</sup>

Հ/հ	Երկիր	Ներդրումներ/ՀՆԱ, %
1.	Վիետնամ	41.9
2.	Կարո Վերդե	41.6
3.	Լեւոտո	40.8
4.	Չինաստան	40.5
5.	Հայաստան	39.0
6.	Հնդկաստան	39.0
7.	Ման Տոմե	38.8
8.	Գայանա	35.3
9.	Կոնգո	34.5
10.	Նիկարագուա	34.5

<sup>1</sup>Օստերթյունը՝ գծապատկեր 1-ում և աղյուսակ 2-ում ՀՀ-ի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության գնահատականները տարբեր են՝ ելնելով տարբեր աղբյուրներից: Տարբերության պատճառ են հանդիսանում փոխարժեքների տատանումները, տարբեր երկրների արժույթների հարաբերակցության տարբերությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ:

Մեկ այլ միջազգային կազմակերպության գնահատականի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Վիետնամում՝ 41,9%: Վերջինս պայմանավորված է երկրի կայուն սոցիալ-տնտեսական վիճակի, տնտեսական կայուն աճի, ներդրումների ակտիվության բարձր մակարդակի, ներդրումային հոսքերի համահարթեցման և տնտեսության դիվերսիֆիկացիայի զարգացմամբ, օրենսդրության կայունությամբ և առաջադիմականությամբ (առաջին հերթին հարկային և ներդրումային), ֆինանսավարկային միջոցների հասանելիությամբ, ինչպես նաև էժան աշխատուժի հետ (աղյուսակ 2)<sup>2</sup>: Իսկ ՀՀ-ի ներդրումներ/ՀՆԱ գնահատականը կազմել է 39:

Վերադառնալով ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրի և հարկային վարչարարության փոխառնչությանը՝ արտաքին աղբյուրներից ներդրումների ծավալի մեծացման հետ միաժամանակ ներդրումային գրավչության վրա ազդում են նաև ներքին աղբյուրների հաշվին իրականացվող տեղական ներդրումներից: Հետևաբար, ՀՀ-ում տնտեսական քաղաքականությունը պետք է միտված լինի խնայողությունների ձևավորմանը, որոնք համալրում են ներդրումային միջոցներին և հնարավորություն են ընձեռում դրանք օգտագործելու տնտեսության իրական հատվածի տարբեր ոլորտներում:

Ինչպես վկայում է շուկայական հարաբերությունների անցման տարբեր պետությունների հարուստ փորձը, միայն պետության ակտիվ մասնակցության պարագայում կարելի է ակնկալել շոշափելի արդյունքներ: Ընդ որում, ներդրումային քաղաքականության դերը պետք է խիստ կարևորել տնտեսական ազատականացման հենց սկզբնական փուլից, և այդ առումով պետությունն իր կարգավորիչ լծակներով պետք է պաշտպանի տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և ներդրումների համար ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ<sup>3</sup>: Նախ և առաջ, բոլոր հարկատուների արդյունավետ գործունեության համար պետությունը պետք է ապահովի անհրաժեշտ օրենս-

<sup>1</sup> <http://infotables.ru/strany-i-goroda/43-ekonomicheskaya-statistika-stran-mira/431-dolya-investitsij-ot-vvp-stran-mira-tablitsa>.

<sup>2</sup> [http://www.ved.gov.ru/exportcountries/vn/about\\_vn/laws\\_ved\\_vn/invest\\_law\\_vn/](http://www.ved.gov.ru/exportcountries/vn/about_vn/laws_ved_vn/invest_law_vn/).

<sup>3</sup> Spahn P., Focltinger W. Germany. In: Fiscal Federalism in Theory and Practice. Ter-Minassian (ed.). Washington, D.C.: International Monetary Fund, 1997, pp.119-121.

դրախրավական դաշտ, ինչը կարևոր է ոչ միայն ընթացիկ, այլև երկարաժամկետ ներդրումների իրականացման համար: Պետության մասնակցությունը երկրի ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացին նպատակահարմար է իրականացնել ազգային տնտեսության տարբեր ճյուղերի նպատակային ֆինանսավորման, համաֆինանսավորման և այլ միջոցներով, որոնց իրագործմանն էապես պետք է նպաստեն կիրառվող հարկային ու հակամենաշնորհային քաղաքականությունը: Երկրում ներդրումային արդյունավետ քաղաքականության հետևողական իրականացման արդյունքում իրատեսական է ակնկալել տնտեսության զարգացման համար բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորում, որն էլ կնպաստի հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

Հարկային վարչարարության բաղկացուցիչ մասն է համարվում հարկային լոգիստիկան, որը նախնական անալիտիկ կանխատեսումային գործունեություն է և որի նպատակն է կայսիտալի և առևտրային աշխատուժի օգտագործման առավել նպաստավոր ոլորտների բացահայտումը<sup>1</sup>: Տնտեսական բարեփոխումների փուլում հարկային վարչարարության կարևոր մասն է կազմում հարկային գործընթացների բարելավումը կամ այլ կերպ՝ օպտիմիզացումը: Վերջինս հարկային պարտավորությունների կրճատումն է հարկատուների առևտրային գործունեության ծավալման ժամանակ, որն իրականացվում է հարկային բոլոր արտոնությունների և հարկերից ազատման հրահանգների և այլ իրավական ակտերի կիրառման միջոցով: Հարկային օպտիմիզացումը կապված է կազմակերպության ընթացիկ գործունեության հետ, որը լինում է երկարաժամկետ և ընթացիկ: Երկարաժամկետ հարկային օպտիմիզացիան ենթադրում է օրինական մեթոդների այնպիսի կիրառում, որոնք փոքրացնում են հարկային բեռը հարկատուի գործունեության ամբողջ ընթացքում: Ընթացիկ հարկային օպտիմիզացիան ենթադրում է օրինական մեթոդների այնպիսի կիրառություն, որոնք թույլ են տալիս նվազեցնել հարկային բեռը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Տնտեսական բարեփոխումների, մասնավորապես, հարկային վարչարարության բարեփոխման հիմնական նպատակներից մեկը ձեռնարկատերերի սովերային տնտեսական գործունեության կանոնակարգումն է և պատշաճ հարկազանձումը: ՀՀ-ում ներկայումս մեծ վտանգ է ներկայացնում կազմակերպությունների սովերային գործունեությունը, որի համար կան նաև որոշակի օբյեկտիվ նախապայմաններ: Դրանցից կարելի է առանձնացնել. 1) հարկային բեռի անհավասար բաշխումը, 2) կոռուպցիոն ռիսկերը, 3) պետական վերահսկողության անարդյունավետության մակարդակը, 4) տնտեսվարող սուբյեկտների հարկային վճարումներից խուսափելու մակարդակը:

Հարկ է նշել, որ հարկային իրավախախտումների և հանցագործությունների «դասական» պատճառներից մեկն է հանդիսանում այն, որ հարկային օրենքները ոչ միշտ են համապատասխանում օրենսդրության հիմնական սկզբունքներին՝ կայունությանը, համընդհանրությանը և անաչառությանը, ինչն իջեցնում է այդ օրենքների արդյունավետությունը<sup>2</sup>: Սովերային տնտեսության տեսակարար կշռի կրճատումը և հարկվող տնտեսության ծավալների ավելացումը հարկային վարչարարության կարևորագույն թիրախներից են, ինչը կարող է իրականություն դառնալ միայն տնտեսական քաղաքականության այլ ուղղություններով նախատեսված միջոցառումների ու ծրագրերի արդյունավետ համադրմամբ: Այս ուղղությամբ տնտեսական բարեփոխումների վերջին տարիների որոշակի ձեռքբերումներից կարելի է համարել հարկային վարչարարության պետական ռազմավարության իրականացումը:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում, անկախացման առաջին տարիներից հարկային վարչարարությունը սկսեց օգտագործվել պետական եկամուտները հավաքագրելու և դրա օգնությամբ հիմնականում կարճաժամկետ խնդիրներ լուծելու նպատակով: Իրականում նման նպատակի իրագործումը հնարավորություն է տալիս պետությանն իրականացնել իր առջև դրված տարբեր ծրագրերի ֆինանսավորման գծով պարտավորություն-

<sup>1</sup> Feldman, Naomi, E. and Slemrod, Joel, 'Estimating tax noncompliance with evidence from unaudited tax returns', *Economic Journal*, 2007, Vol. 117, Issue 518, pp. 327-352.

<sup>2</sup> Dubin, Jeffrey A., 'Criminal investigation enforcement activities and taxpayer noncompliance', in *The IRS Research Bulletin: Proceedings of the 2004 IRS Research Conference, Statistics of Income Division, Internal Revenue Service, Department of the Treasury*, 2004, Washington DC, pp. 3-35.

ներք, սակայն ավելի երկար ժամանակահատվածում կարող է ունենալ նաև հակառակ էֆեկտը: Բանն այն է, որ «ամեն գնով» հարկերի հավաքագրումը կարող է նաև վանել տնտեսվարողներին, առաջացնել «կապիտալի փախուստ» երկրից: Հարկային վարչարարության էվոլյուցիոն զարգացման վերլուծությունը վկայում է, որ վերջին տարիներին արմատավորվում է հեռանկարային և միջնաժամկետ նպատակադրումների միջոցով ռազմավարության կիրառումը: Հասկանալի է, որ ներկայումս մշակման փուլում գտնվող հեռանկարային զարգացման ռազմավարությունից բացի, պետական եկամուտների մասով մշակվում է ոչ միայն ոլորտային զարգացման<sup>1</sup>, այլև ներուլորտային՝ հարկային և տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի զարգացման և այլ ռազմավարություններ, որը, ինչ խոսք, էական առաջընթաց կարելի է համարել<sup>2</sup>: Նման փաստաթղթերի մշակման ժամանակ, մեր կարծիքով, առանցքային նշանակություն ունի պետության կողմից ձևակերպվող հեռահար նպատակների, այդ թվում՝ գործարարության զարգացման, ներդրումային միջավայրի առողջացման, փոքր և միջին բիզնեսի զարգացման ներդաշնակեցումը՝ հարկային վարչարարության կարճաժամկետ խնդիրների հետ մեկտեղ<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը պայմանավորված է հետևյալ հիմնահարցերի հանգուցալուծմամբ.


- վարչարարության հիմնարար սկզբունքների, հատկապես՝ արդյունավետության, համընդհանրության և արդարության սկզբունքների պատշաճ կիրառում,
- արտահանմանն ուղղված նոր հարկային արտոնությունների տրամադրում,
- Մաքսային միությանն անդամակցելու պարագայում տեղական արտադրության համար հարկային բարենպաստ դաշտի ձևավորում,
- Հայաստանի տնտեսության մրցակցային առավելությունների իրացմանը նպաստող հարկային վարչարարության իրականացում,
- ուղղակի հարկերի տեսակարար կշռի մեծացումը անուղղակի հարկերի նկատմամբ,
- հարկեր / ՀՆԱ հարաբերակցության ավելացում,
- կոշտ հարկային վարչարարության զուգակցումը ճկուն հարկային քաղաքականության հետ,
- պետության և տնտեսվարող սուբյեկտների շահերի ներդաշնակեցում,
- ազատական տնտեսության և պետության միջամտության օպտիմալ ռեժիմների կիրառում,
- ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանը միտված հարկային բարեփոխումներ,
- աշխատատեղերի ստեղծմանը նպաստող հարկային վարչարարության ծավալում,
- հարկային օրենքների պարզեցում, մասնավորապես՝ փոքր և միկրո բիզնեսի ներկայացուցիչների համար,
- վերամշակող ճյուղերի զարգացմանն ուղղված հարկային վարչարարության իրականացում,
- հարկային տարբեր օրենքներում առկա հակասությունների վերացում,
- օրենքների կիրառման համար համապատասխան իրավական դաշտի ձևավորում,
- հարկային մարմինների և ձեռներեցների միջև գործընկերային հարաբերությունների հաստատում,
- հարկային տեսուչների որակավորման բարձրացում,
- համարժեք պատժամիջոցների կիրառման միջոցով՝ կաշառակերության դեպքերի աստիճանական վերացում,
- տնտեսական անվտանգության ապահովում:

ՀՀ-ում հարկային վարչարարության արդյունավետության գնահատման կարևոր ցուցանիշ է հանդիսանում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, որը 2006-2016թթ. ունի ավելանալու միտում (տե՛ս գծապատկեր 2-ը):

<sup>1</sup> Հարկային վարչարարության 2012-2014թթ. ռազմավարություն:

<sup>2</sup> Հարկային մարմնի SS ոլորտի զարգացման ռազմավարություն:

<sup>3</sup> DeLuca, Donald, Greenland, Arnold, Hennessy, Sean, Kindlon, Audrey and Stavrianos, Michael, 'The tax compliance burden of small businesses – A profile of 50 businesses', in The IRS Research Bulletin: Proceedings of the 2004 IRS Research Conference, Statistics of Income Division, Internal Revenue Service, Department of the Treasury, 2004, Washington DC, pp. 97-137.



Գծայատկեր 2. ՀՀ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան 2006-2016թթ., %<sup>1</sup>

Այսպես, ըստ գծայատկեր 2-ի, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ամենաբարձրը եղել է 2013թ. և կազմել է 23.4%: Դա պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը՝ իր մեջ ներառելով նախկինում «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները<sup>2</sup>: Մինչ այդ, պետական բյուջե եկամտահարկ հավաքագրվել է միջինում 58566.8 մլն դրամ, իսկ 2013թ.-ից 2016թ. հավաքագրվել է միջինում 297408.3 մլն դրամ<sup>3</sup>: 2013թ.-ից հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կտրուկ աճել է, ինչը պայմանավորված է եղել ՀՀ տնտեսությանը բնորոշ իրավիճակային փոփոխությունների հետ:

Այսպիսով, ընդհանրական առումով նշենք, որ հարկային վարչարարության գործիքակազմի և հարկային համակարգում բարեփոխումների իրականացման արդյունքում անհրաժեշտ է ձևավորել հարկային-գործարար միջավայր-պետություն փոխշահավետ համագործակցության ձևաչափ, ինչը մի կողմից հնարավորություն կտա ձևավորել մրցունակ հարկային համակարգ, մյուս կողմից բիզնես միջավայրը այդ մրցունակ հարկային համակարգից հնարավորինս չպետք է տուժի, ինչպես պետական բյուջեի եկամուտների հավաքագրումը, այնպես էլ պետք է իրականացվի պետության գերակա նպատակի սոցիալական քաղաքականության իրականացումը:

<sup>1</sup> <http://data.worldbank.org/indicator/GC.TAX.TOTL.GD.ZS?end=2012&locations=AM&start=2002>,  
[http://www.taxservice.am/Shared/Documents/Publications/PEK\\_tarekan\\_hashvetutyun2009.pdf](http://www.taxservice.am/Shared/Documents/Publications/PEK_tarekan_hashvetutyun2009.pdf), armstat.am.  
<sup>2</sup> «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք(ՀՕ-246-Ն, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1 Հոդ.1634.20):  
<sup>3</sup> armstat.am.

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԲԱՐԵՓՈՆԵՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍ ՄԻՋՎԱՅՐԻ  
ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր**

Հարկային վարչարարության գործիքակազմի և հարկային համակարգում բարեփոխումների իրականացման արդյունքում անհրաժեշտ է ձևավորել հարկային-գործարար միջավայր-պետություն փոխա-հավետ համագործակցության ձևաչափ, ինչը մի կողմից հնարավորություն կտա ձևավորել մրցունակ հարկային համակարգ, մյուս կողմից բիզնես միջավայրը այդ մրցունակ հարկային համակարգից հնարավորինս չպետք է տուժի, ինչպես պետական բյուջեի եկամուտների հավաքագրումը, այնպես էլ պետք է իրականացվի պետության գերակա նպատակի սոցիալական քաղաքականության իրականացումը:

*Բանալի բառեր՝ հարկային հանցագործություններ, տեղական ներդրումներ, հարկային լոգիստիկա, հարկային օպտիմիզացիա, ստվերային տնտեսություն, ներդրումային արդյունավետ քաղաքականություն, կապիտալի փախուստ, շահերի ներդաշնակեցում:*

**ИНСТРУМЕНТАРИЙ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ И ПРИОРИТЕТЫ РЕФОРМЫ  
НАЛОГОВОЙ СИСТЕМЫ В УЛУЧШЕНИИ БИЗНЕС-СРЕДЫ**

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, *к.э.н.*

*старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, *к.э.н.*

*младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**Аннотация**

В результате реформирования инструментария налогового администрирования и налоговой системы необходимо сформировать формат взаимовыгодного сотрудничества «налоговая система-бизнес среда-государство», что, с одной стороны, позволит создать конкурентоспособную налоговую систему, а с другой стороны, бизнес-среда по мере возможности не должна пострадать от этой системы: поступление доходов в государственный бюджет должно осуществляться в целях реализации социальной политики, являющейся приоритетным направлением деятельности государства.

*Ключевые слова: налоговые преступления, местные инвестиции, налоговая логистика, налоговая оптимизация, теневая экономика, эффективная инвестиционная политика, бегство капитала, гармонизация интересов.*

**TAX ADMINISTRATION TOOLKIT AND THE PRIORITIES OF THE TAX SYSTEM REFORM TO  
IMPROVE THE BUSINESS ENVIRONMENT**

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, *Ph.D. in Economics*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**TATEVIK SMBAT PARSADANYAN**, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract**

As a results of the reforming of the tools and instruments of the tax administration and tax system it is required to shape the guiding principles of mutually beneficial cooperation "tax system-business environment-government," which, on the one hand, would allow to build a competitive tax system, and on the other hand, the business environment, to the extent possible, should not suffer from this system: revenues of the state budget needs to be spent to carry out to the social policy, the priority of the government.

*Keywords: Tax crime, local investment, tax logistics, tax optimization, shadow economy, effective investment policy, capital flight, harmonization of interests*